ԿԱՊԱՆԻ N13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԹԵՄԱ ՝ Լեզվական գրագիտություն և կարողունակությունների ձևավորմանը նպաստող ուսումնական ռազմավարությունները

ՈՒՍՈՒՑԻՉ ՝ Լուսինե Սարգսյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Բալայան

Բովանդակություն

Ներածություն……2-3

Գլուխ1.Ինքնակառավարվող սովորողի բնութագիրը……4-5

1.1 Լեզվագրագիտություն և կարողունակություն 5-8

1.2 Ուսուցման ՍՄԱՐԹ խնդիրները, որպես ուսումնառության որակի նախադրյալ……..... 8-9

1.3 Բլումի տաքսոնոմիայի տիրույթները, մակարդակները և բայերը……9-11

Գլուխ 2

2.1 Լեզվական գրագիտություն և կարողունակության ձևավորելու իմ փորձը 12-19

2.2 Ուսումնական ռազմավարությունները առցանց գործիքների օգտագործմամբ ……19-20

Եզրակացություն ……

Օգտագործված գրականություն …….

Հղումների ցանկ…….

Ներածություն

Թեմայի արդիականությունը. 21-րդ դարը գիտության արագ զարգացման և անընդհատ փոփոխվող գիտելիքի ժամանակաշրջան է և դարի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ձևավորել այնպիսի սովորող, որը լինի նախաձեռնող, ժամանակի պահանջներին դիմակայող , տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին, լինի հմուտ, ճկուն մտքով, ինքնուրույն, ստեղծագործ, նորարար և ունենա այնպիսի գիտելիքներ, որոնք կլինեն կյանքում կիրառելի:

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային մոտեցնել գրքին, այնուհանդերձ, գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ուսումնառության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Ուսումնառության արդյունավետ կազմակերպումը հանգեցնում է ինքնակառավարվող սովորողի ձևավորմանը: Միայն նշանակալից ուսումնառության արդյունքում է ձևավորվում ինքնակառավարվող սովորող, որն արժևորում է ուսումնառությունը, ունի սովորելու հմտություններ, նաև կարողանում է կիրառել իր գիտելիքը իրական կյանքում: Նշանակալից է այն ուսումնառությունը, երբ սովորողը ներգրավված է գործընթացում, ձեռք է բերում հիմնարար և կիրառելի գիտելիքներ, ունակ է հիմնախնդիրներ վեր հանելու և լուծումներ առաջարկելու: Նման ուսումնառության արդյունքում ձևավորվում է ինքնակառավարվող սովորող, որն ունի նպատակների սահմանման, ժամանակի կառավարման, իր ուսումնառությունը պլանավորելու, ինքնագնահատման, տեղեկատվության հավաքման և կրթական ռեսուրսների օգտագործման ,կառուցողական և հաղորդակցման հմտություններ , քննադատական մտածողություն:

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:

Կարևոր եմ համարում նշել, որ ներկայիս պայմաններում հատկապես չափազանց կարևոր է աշակերտների շրջանում լեզվական գրագիտության զարգացումը, քանի որ օրեցօր զարգացող հասարակական կյանքում ինքնուրույն անհատների գոյությունը մեծագույն պարգև է: Հետևաբար հետազոտական աշխատանքի շրջանակներում հնարավոր է վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք առկա են ինքնակառավարվող սովորողի հմտությունների ձևավորեման գործում և ներկայացնել համարժեք լուծումներ դրանց հաղթահարման ուղղությամբ:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Սույն ուսումնասիրության իրականացումը նպատակ է հետապնդում ուղիներ փնտրել ձևավորել և զարգացնել ինքնակառավարվող սովորողի կարևորագույն կարողունակությունը , ինչպես հասնել նրան , որ սովորողը գրագետ ընթերցի ,ինքնուրույն սովորի , խոհուն մտածող դառնա , նպատակներ դնի և ձգտի իրագործել իր առաջ դրված նպատակները :

Վերոնշյալ նպատակի իրագործման համար մեր առջև դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✔ Ներկայացնել ինքնակառավարվող սովորողի ընդհանուր բնութագիրը,
- ✔ Բացահայտել նորագույն տեխնոլոգիաների հիմնական առանձնահատկությունները,
- ✔ Իրականացնել գործնական աշխատանքներ առցանց գործիքների միջոցով , որպեսզի սեր և հետաքրքրություն արթնացնենք ընթերցանության նկատմամբ:

Գլուխ1

Ինքնակառավարվող սովորողի բնութագիրը

1.1 Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Ինքնակառավարվող սովորողը նա է, ով

- ցուցաբերում է նախաձեռնողականություն, անկախություն և ուսման մեջ համառություն,

- վերցնում է իր ուսման պատասխանատվությունն ու խնդիրները դիտում է որպես մարտահրավերներ, այլ ոչ թե խոչընդոտներ,

- կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը և ինքնուրույն է,

- կարգապահ է և ունի հետաքրքրասիրության բարձր աստիճան ,

- ունի քննադատական և վերլուծական մտածողություն ,

- ունի սովորելու , աճելու ցանկություն ու ինքնավստահություն .

- ի վիճակի է օգտագործել ուսուցման հմտությունները, կազմակերպել իր ժամանակը, ուսման համար համապատասխան տեմպ սահմանել և աշխատանքներն ավարտելու ծրագիր մշակել:

Ինքնակառավարվող սովորողը կարող է ինքնուրույն կառուցել իր գիտելիքները, որոնք կիրառում է տարբեր իրավիճակներում: Նա ձգտում է անընդհատ հարստացնել իր գիտելիքները, հատկապես արժևորում է արդի գիտելիքները, որոնք նա հաճախ օգտագործում է ի բարօրություն հասարակության: Նա նույնիսկ փորձում է ներդրում ունենալ իր ուսումնական միջավայրում՝ վերհանելով խնդիրները և առաջարկելով գործնական լուծումներ, դառնում գործընթացի անմիջական մասնակից : Ըստ Թրիև Հոնգիև Վոի (2017) ինքնակառավարվող սովորողին բնորոշ են նպատակների ձևակերպումը, պլանների իրականացումը և վերլուծական անդրադարձ կատարել ուսումնառությանը:

Ինքնակառավարվող սովորողը պետք է բացահայտի սովորելու իր կարիքները և պատասխանատվություն ստանձնի ուսումնառության համար անկախ ամեն ինչից, ունենա սովորելու մոտիվացիա: Նա խնդիրներն ընդունում է ոչ թե որպես խոչընդոտներ, այլ մարտահրավերներ, որոնք առանց ընկրկելու հաղթահարում է իր համառությամբ և նպատակասլացությամբ:

Ըստ ինքնակառավարվող սովորողի ուսումնառության հանդեպ վերաբերմունքի առանձնացվում է 4 խումբ .

Դիմադրող սովորողներն անտարբեր են և աշխատանքի մեջ նպատակ չեն գտնում: **Պասիվ** սովորողներն առանձնապես չեն չարչարվում, գնում են առաջ հոսանքի հետ՝

վերահսկվելով մյուսների կողմից: Վերջիններս ձգում են նրանց հաջող վերջնարդյունքի և թիմի պատվի համար: **Առաջադիմող** սովորողները ջանասիրաբար ջանքեր են գործադրում նախագիծը հաջող ավարտին հասցնելու համար և դրանից այն կողմ չեն տեսնում մեծ նպատակ: Նրանց անընդհատ խրախուսում են թիմակիցները /ուսուցիչը: **Նպատակային** սովորողները բավականություն են ստանում աշխատանքի պրոցեսից, ունեն ներքին մղում, հետաքրքրվածություն և բարձր պատասխանատվություն ստանձնած գործի նկատմամբ:

Գրագետ ինքնակառավարվող սովորող ունենալու համար անհրաժեշտ է ապահովել սովորողի գրագիտության պատշաճ մակարդակ:

Միջնակարգ կրթության առանցքային կարողունակություններից է լեզվական գրագիտությունը :

Լեզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

Գիտության մեջ սահմանված է գրագիտության հինգ մակարդակ:

1-ին մակարդակի սովորողը նա է, ով ունի թույլ հմտություններ , ով չի կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել՝ չնայած ունի գիտելիքի որոշակի պաշար:

2-րդմակարդակի սովորողը կարողանում է ըմբռնել պարզ և հստակ շարադրված նյութերը: Կարողանում է լուծել ոչ բարդ խնդիրները: Այս մակարդակը համարվում է հմտությունների թույլ մակարդակ, բայց մի փոքր բարձ է առաջին մակարդակից: Այս

մակարդակի սովորողը կարող է կարդալ նյութը բայց չհասկանալ և չկարողանալ նյութի վերաբերյալ փորձարկումներ կատարել: Այս կարգի սովորողը դժվարանում է դիմակայել կյանքի զարգացման նոր պահանջներին, քանի որ չի դրսևորում նոր աշխատանքային հմտություններ:

3-րդ մակարդակը Առօրյա կյանքի և աշխատանքի պահանջները հաղթահարելու համար անհրաժեշտ է այնպիսի սովորող, որը կհաղթահարի գիտելիքի նվազագույն բարդ մակարդակը: Դա մոտավորապես հմտությունների այն մակարդակն է որն անհրաժեշտ է միջնակարգ դպրոց կամ քոլեջ ընդունվելու համար: Այն պահանջում է տեղեկատվության մի քանի աղբյուր, որը հնարավորություն կտա ինտեգրել և ավելի բարդ խնդիրներ լուծել :

4-րդ և **5- րդ մակարդակների** սովորողը ցուցադրում է ավելի բարձր կարգի տեղեկատվության մշակման հմտությունների տիրապետում:

<u>Մտածելու հմտությունների տեսակները և դերը</u>

Մտածողությունը փաստական գիտելիքներն ընկալելու և կիրառելու ունակություն է: Մտածողությունը թույլ է տալիս մարդկանց մեկնաբանել , ներկայացնել կամ մոդելավորել աշխարհում իրենց փորձառությունը և կանխատեսումներ անել հենց այդ աշխարհի վերաբերյալ: Ուստի այն անհրաժեշտ է ինքնակառավարման ձգտող սովորողի համար, որն ունի կարիքներ, նպատակներ և ցանկություններ և հնարավորություններ է տալիս նրան ծրագրեր կազմել դրանք իրականացնելու համար: Զարգացնելով հետևյալ հմտությունները՝ կօգնենք սովորողներին լինել ավելի հաջողակ:

1.Դժվարությունների և խնդիրների լուծման հմտություն : Հարափոփոխ և մրցակցային աշխարհում հաջողության հասնելու համար սովորողը պետք է կարողանա դիտարկել, քննադատորեն մտածել, վերլուծել և գտնել լուծումներ տարբեր բարդ իրավիճակներից դուրս գալու համար: Այս հմտությունը հարկավոր է զարգացնել սովորողին հակադարձ հարցեր տալով: Օրինակ՝ եթե երեխան հարցնում է թե ինչու՞ հնարավոր չէ կառուցել քաղաք Լուսնի վրա, կարող եք հարցնել.<< Իսկ դու ի՞նչ ես կարծում ,ինչու՞>>: Երեխան առաջարկում է տարբերակներ և գտնում այլընտրանքային լուծումներ:

2.Համատեղ գործունեության հմտություն: Ապացուցված է որ առավել լավ արդյունքներ են ստացվում համատեղ արդյունավետ աշխատանքից: Այս հմտությունը կարելի է զարգացնել ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ օ գտագործման հմտություններ: Սրանք անհրաժեշտ է զարգացնել, որպեսզի մեդիա-տեղեկատվության ահռելի հոսքի մեջ սովորողները հստակ կողմնորոշվեն: Կարող ենք առաջարկել գտնել որևէ տեղեկություն, կազմել մի քանի երթուղիներ վիրտուալ քարտեզներով : Երեխաները պետք է սովորեն օգուտ քաղել համացանցից:

4.Տարածական մտածողության հմտություն: Այն ամեն օր կիրառում ենք մեր առօրյայում: Տարածական պատկերացումն ու հասկացումը՝ մտովի վիզուալացնել օբյեկտները, կարևոր հմտություն է , որն օգնում է կողմնորոշվել միջավայրում, ճիշտ օգտագործել տարածությունը: Դրան օգնում են լեգոները, կոնստրուկտորները, որտեղ պետք է ինչ-որ բան կառուցել մանր դետալներով:

5.Լակոնիկ խոսքի հմտություն: Շատ կարևոր է հատկապես հասուն սովորողի համար: Այս հմտությունը կօգնի դառնալ առաջնորդ , տալ առաջադրանքներ և ընդհակառակը լսել առաջադրանքներ և կատարել:

6.Ստեղծագործական մտածողություն: Այն պետք է զարգացնել և խրախուսել ցանկացած գործունեության մեջ: Հարկավոր է անդադար հարցնել, թե սովորողն ինչպե՞ս կլուծեր այս կամ այն խնդիրը, հանձնարարել կամ առաջարկել սովորական իրերի մեջ անսովոր կողմեր գտնել:

<u>1.2 Ուսումնառության որակի նախադրյալը</u> ուսուցման նպատակներից բխող ուսուցման չափելի խնդիրներն են, որոնք ապահովում են ուսուցման ցանկալի վերջնարդյունքը: Լավ չափելի խնդիրները ենթադրում են լավ արդյունքներ, որոնք լրամշակելով ապահովում ենք ծրագրի շարունակական կատարելագործումը: Ուսուցման խնդիրը սովորողի ձեռք բերած գիտելիքի նշանակալից և էական ուսուցման ձևակերպումն է: Խնդրով է պայմանավորված, թե ուսումնառության ավարտին կամ թեմայի ավարտին ինչ կիմանա, կկարողանա և ինչ վերաբերմունք կունենա սովորողը: Որքան չափելի են ձևակերպվում ուսուցման խնդիրները, այնքան օբյեկտիվ է լինում վերջնարդյունքի գնահատումը:

Որպեսզի դասընթացի գերնպատակին կամ առաքելությանը հասնելու ուղին ավելի տեսանելի ու հասկանալի լինի, որպեսզի հնարավոր լինի վերլուծել այն, թե որքանով են իրականանալի սահմանված նպատակները, անհրաժեշտ է հստակ և

ճիշտ սահմանել խնդիրները: Դրա համար խնդիրները պետք է լինեն “ՍՄԱՐԹ” (SMART, թարգմանաբար՝ խելացի):

SMART-ը լայն կիրառում ունի կրթական նպատակների ու խնդիրների ձևակերպման մեջ: Այն իրենից ներկայացնում է որոշակի չափանիշներ, որոնց պետք է համապատասխանեն խնդիրները: Դրանք են՝

S *(Specific)*, - կոնկրետ, պարզ ձևակերպված

M *(Measurable)*, – չափելի, ստուգելի

A*(-* հասանելի, իրատեսական, հնարավորություններին համապատասխանող

R – նշանակալի, համատեքստին վերաբերող

T *(Timely)-* հստակ ժամանակային սահմաններ ունեցող

Ուսուցման խնդիրները գրելիս հարկավոր է խուսափել հետևյալ բայերից. *հասկանալ, վայելել, ընկալել, գիտակցել, իմանալ, զգուշանալ:* Փոխարենն օգտագործեք SMART բայերը. ***ցույց տալ, զարգացնել վերլուծել, գնահատել, կազմակերպել, ստեղծել, գրել, պլանավորել, կիրառել, արտադրել, կազմել ներառել, կառուցել:***

1.3 Բլումի տաքսոնոմիայի տիրույթները, մակարդակները և բայերը

Բենջամին Բլումը 1956 թ. ստեղծել է չափելի բայերի աստիճանակարգ՝ օգնելու մեզ նկարագել եւ դասակարգել դիտարկվող գիտելիքները, կարողությունները, հարաբերությունները, վարքագիծը եւ ունակությունները: Տեսության հիմքում այն գաղափարն է, որ գոյություն ունեն դիտարկվող գործողությունների մակարդակներ, որոնք ցույց են տալիս, որ ինչ-որ բան է տեղի ունենում գլխուղեղում (ճանաչողական

ակտիվություն):

Ուսուցման արդյունքները սահմանելով չափելի բայերի միջոցով մենք մատնանշում եք՝ ինչ պետք է անի սովորողը, որ ցուցադրի ուսուցումը ինքնին:



Բլումի աստիճանակարգի յուրաքանչյուր մակարդակի հարցերը

Վերլուծել		
Բայեր	**Հարցեր**	**Առաջադրանքներ**
տարբերակել, դասավորել, համեմատել, հակադրել, հարաբերակցել, ուսումնասիրել, քննել, փորձարկել, հարցադրել, ստուգել	Ինչպիսի իրադարձություններ կարող էին պատահել: Ինչի էր սա նման: Ո՞րն էր հիմնական թեման: Ինչպիսի այլ հետևանքեր ես տեսնում: Ո՞րն էր գլխավոր դրդապատճառը: Ո՞րոնք էին գլխավոր խնդիրները:	Ստեղծիր հարցաշար տեղեկություն հավաքելու համար: Գրիր նոր ապրանքը գովազդելու համար տեքստ: Կատարիր հետազոտություն, որեսզի կարողանաս հիմնավորել քո կարծիքը: Ստեղծիր աղյուսակ քննադատական փուլերը ցույց տալու համար: Կազմիր աղյուսակ օգտագործելով նշված տեղեկությունը: Կազմիր գլուխկոտրուկ: Կազմիր հաշվետվություն:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԼՈՒՄԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԸ



Իսկ ահա մտածողության տեսակները , ընկալման և իմաստավորման ձևերը որպես ուսուցման ցանկալի նպատակ , մանր-մանր քայլերով արտացոլվում են արդյունավետ ուսումնառության ընթացքում : Հովարդ Գարդները իր <<Գիտակթության կառուցվածքը >> գրքում (1983թ.) նշում է, որ յուրաքանչյուր մարդու հատուկ է մտածողության ընկալման և իմաստավորման բազմապիսի ձևեր, որոնք հազվադեպ են գործում իրարից անկախ:

- ***Կենտրոնացում /կիզակետում/*** ՝ հավաքված տեղեկատվության կենտրոնացում
- ***Հիշելը***՝տեղեկատվության պահպանում և անդրադարձ
- ***Հավաքում*** տեղեկատվությունը հասնում է գիտակցված մտքին՝ ճանաչողական մտքի մշակման համար
- ***Կազմակերպում***՝ տեղեկատվությունն ավելի արդյունավետ օգտագործելու համար:
- ***Վերլուծություն***՝ տեղեկատվության տրոհում, դրա մասերն ու նրանց հարաբերությունները հականալու համար:
- ***Կապակցում***՝ կապեր հաստատելը հարակից իրերը կամ տեղեկատվության կտորների միջև:
- ***Ինտեգրում***՝ տեղեկատվության միացում և համատեղում կապերն ավելի լավ հասկանալու համար:
- ***Գնահատում***՝գաղափարների կամ նյութերի հիմնավորվածության և որակի գնահատում, կարծիքներ ներկայացնելու և պաշտպանելու նպատակով :
- ***Ստեղծում/առաջացում***՝ ստեղծում է նոր տեղեկատվություն, գաղափարներ կամ իրերը դիտարկելու եղանակներ:

Գլուխ 2

2.1 Լեզվական գրագիտություն և կարողունակություն ձևավորումը իմ փորձից

Եթե մենք ցանկանում ենք, որ մեր աշակերտները հասնեն ուսումնառության ավելի արդյունավետ մակարդակների, ապա դասավանդողները պետք է սովորեն և կիրառեն ավելի հզոր միջոցներ

Դոկտոր Լ.Դին Ֆինկ

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է՝ զարգացնել կարդալու, պատմելու կարողությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Շատ ընթերցելը կարող է ավելի դյուրին դարձնել երեխայի շփումը շրջապատի հետ: Այնուամենայնիվ տարրական դասարաններում մայրենի առարկայի արդի խնդիրներից մեկն է ոչ միայն աշակերտների մեջ զարգացնել կարդալու որակական հատկանիշները, այլ նաև ամրապնդել ընթերցածը ընկալելու, յուրացնելու, տեքստի բովանդակությունը վերարտադրելու հմտություններն ու կարողությունները: Ըստ Ֆինկի նշանակալի ուսումնառության տաքսոնոմիայի՝ հիմնարար՝ դեկլարատիվ և ընթացակարգային գիտելիքները, ինտեգրված ուսուցման միջոցով պետք՝ տեղափոխել արտաքին միջավայր, որտեղ սովորողները օգտագործելով իրենց հաստատուն գիտելիքները , կիրառելով վերլուծելու , համադրելու. եզրահանգումներ անելու հմտություններն ու կարողությունները, ցուցաբերելով վերաբերմունք և համագործակցային մոտեցում, ձեռք կբերեն նոր հմտություններ:

<<Կարողանալ կարդալ բառիս բուն իմաստով նշանակում է անշունչ տառերից քաղել կենդանի միտք>>:

Կ.Դ. Ուշինսկի

Արդյունավետ ուսուցման կարևոր բաղադրիչ է միջառարկայական կապի ապահովումը : **Ինտեգրված ուսումնական ծրագրի** իրագործումը հնարավոր է միայն տվյալ դասարանի աշակերտների հետ աշխատող մանկավարժների համագործակցության արդյունքում : Այդ մանկավարժները իրենց առաջ ընդհանուր նպատակ են դնում և պարտավորվում են նախապես սահմանված ժամկետում աշակերտների մեջ ձևավորել այնպիսի կարողունակություններ ,որի արդյունքում աշակերտների մոտ ակնառու երևում են մտածողության բոլոր ձևերը : Քանի որ սովորողները , մասնավորապես կրտսեր դպրոցականները չեն կարող երկարատև նույն աշխատանքով զբաղվել , և որպեսզի մեր առաջ դրված դասընթացի նպատակներին հասնենք ու լուծենք չափելի ուսուցման խնդիրները, անհրաժեշտ է հաճախակի գործունեության տեսակները փոփոխելով , առարկաների ինտեգրումով սովորողին ներգրավել ուսումնական գործընթացում: Հետևաբար սովորողը միջառարկայական կապի ապահովման արդյունքում ձեռք կբերի հիմնարար գիտելիք , ինքնակառավարվողի հմտություններ ,որոնք կիրառելի են կյանքում , և դրանք էլ հիմք կդառնան բարձ մակարդակի մտածողության ձևավորմանը:

Պլանավորել եմ իրականացնել նախագծային ուսումնառություն չորրորդ դասարանում առկա ուսուցման պայմաններում: Ուսուցումը աշակերտակենտրոն է , իսկ դասընթացի բնույթը՝ համադրություն: Նախագծային աշխատանքը կայանում է նրանում, որ երեխաները, իրենց հետաքրքրությունից ելնելով, ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր:

Իմ ուշադրության կենտրոնում ունենալով սովորողների կարիքները, տարիքային և անհատական առանձնահատկությունները, հստակ սահմանված խնդիրները , դասընթացին ուսումնասիրվող գրականությունը, նպատակամեդ մեթոդները, համապատասխան խաղերն ու առաջադրանքները և որոշելով դասընթացի տեսակը, տիպը , բնույթը և անպայմանորեն ձեռքի տակ ունենանով առարկայական չափորոշիչները ՝ փորձեմ չորրորդ դասարանում կերտել խոհուն ընթերցողներ , որը կխթանի սովորողների ուսուցման և մտածողության

հմտությունների զարգացմանը : Կարևոր քայլերից է նաև աշակերտներին համացանցից օգտվելու հնարավորության և անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը: Դասընթացի ընթացքում պետք է կիրառել ինտերակտիվ մեթոդներ և իրականացնել տարբերակված ուսուցում : Պլանավորման փուլում վերջնարդյունքների մասին պետք է իրազեկել և՛ աշակերտներին , և՛ ծնողներին:

Իմ դասընթացի նպատակը է **գրագետ ընթերցող ձևավորելն է :**

Գրագետ ընթերցողը նա է, ով ընթերցանության նկատմամբ ունի կայուն սովորույթ, ներքին պահանջմունք՝ այն ընկալելու իբրև աշխարհը և իրեն ճանաչելու կարևոր միջոց: Նա այն երեխան է, ով տիրապետում է կարդալու տեխնիկային, կարդացածն ընկալելու հնարներին, գրքեր ընտրելու , գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտություններին:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ ուսումնական խնդիրները.

1.Ձևավորել կարդալու տեխնիկան և տիրապետել տեքստի ընկալման ու վերլուծության հնարներին, որը նշանակում է ներգրավվել ընթերցողական ճիշտ գործունեության մեջ. վերջինս ենթադրում է ընթերցանության նկատմամբ ակտիվ հետաքրքրություն և կարդալու պահանջմունքի միաժամանակ զարգացում:

2.Գրականության միջոցով ուղղորդել դեպի մարդկային փոխհարաբերությունների , բարոյագիտական արժեքների աշխարհ, որտեղ նա կդաստիարակվի իբրև ազատ և անկախ մտածողության տեր անհատ՝ ձևավորված գեղագիտական ճաշակով:

3.Զարգացնել կրտսեր դպրոցականի բանավոր և գրավոր խոսքը , խոսքային և հաղորդակցական մշակույթը, համագործակցային հմտությունները և նորից հիշեցնելով սովորողի իրավունքներն ու պարտականությունները՝ ներարկել աշխատասիրություն և պատասխանատվության զգացում:

Բոլոր նպատակներին պետք է հասնել սովորողակենտրոն սկզբունքով՝ առաջնորդվելով՝ գիտելիքի ձեռքբերում և դրա իմաստավորում, կիրառում, վերլուծելու և համադրելու կարողության ձեռքբերում, եզրահանգում, գնահատում, նոր գիտելիքների ձեռքբերում **ըստ Բլյումի տաքսոնոմիայի** :

Նախ պետք է ճանաչել աշակերտին, վեր հանել նրա կարիքները: Ուսումնասիրելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները՝ ես ակնկալում եմ , որ յուրաքանչյուրն իր ձեռք բերած գիտելիքները կկիրառի գործնականում և դասընթացի ավարտին նրա իմացական ոլորտում կամ պատկերացումներում փոփոխություն տեղի ունենա ,որ նա կարողանա որևէ բան այլ կերպ անել ,քան այդ անում էր մինչև դասընթացը: Սրա համար անհրաժեշտ է, որ սովորողները լինեն ուսումնառության գործընթացում ակտիվ դեր ունեցողներ: Այսինքն նրանք պիտի իրենց ստացած գիտելիքը կապեն սեփական մտքերի ու գործողությունների համատեքստում:

Սովորողների գիտելիքների,կարողությունների և հմտությունների զարգացման համար առանձնացրել եմ գեղարվեստական գրականություն /Մայրենի 4, <<Ինքնուրույն ընթերցանություն>> առարկաների դասանյութերից /,ինչպես նաև ոչ ծրագրային ստեղծագործություններ , որտեղ գլխավոր հերոսների օրինակով կարող եմ զարգացնել սովորողների ուսուցման հմտությունները: Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը կախված է նաև գրավիչ մուտքով և միջառարկայական կապի ապահովումով: Խմբային աշխատանքներն էլ շատ հարմար են,որպեսզի զարգացնան Հովարդ Գարդների << Բազմաբնույթ մտածողության >> բաղադրիչները:

Ընթացիկ և միջանկյալ գնահատումներով պետք է որոշել սովորողների կարիքները և իրավիճակից կախված փոփոխել սովորողների հետ տարվող աշխատանքի ուղղությունը՝ ընտրելով համապատասխան մեթոդներ: Անդրադարձ կատարելով ուսումնական խնդիրներին, համեմատելով աշակերտի սկզբնական կարիքները դասընթացի վերջնարդյունքներին և գրանցելով ուսումնական առաջընթաց՝ պլանավորել հետագա գործունեությունը :

Գրական ստեղծագործության վերլուծության եղանակներն են՝ լեզվաոճական,պրոբլեմային,գործողությունների զարգացման գեղարվեստական կերպարների:

1.Լեզվաոճական վերլուծություն

ա/ Մեկնաբանվում են ոչ թե բառերը, այլ այդ բառերով հյուսված կերպարային կտավները, որովհետև հեղինակային բառամթերքը սովորաբար բազմաշերտ, բազմիմաստ, բազմանշանակ է լինում:

բ/ Բացահայտվում է ստեղծագործության իմաստը , գրողի մտքերն ու զգացմունքները, որոնք մարմնավորվում են բառապաշարի հարստությամբ,դարձվածների օգնությամբ և այլն:

2.Պրոբլեմային վերլուծություն

Այս վերլուծության արդյունավետությունը կախված է հարցազրույցը մեթոդապես ճիշտ կառուցելու հմտությունից: Հարցազրույցի հարցերը ձևակերպելիս պետք է կարևորել.

ա/ աշակերտներից ակնկալվող այլընտրանքային պատասխանների հնարավորությունը

բ/ հարցի մեջ պետք է դրվեն երևակայական ,հրապուրիչ ,զարմացական երանգներ

գ/ հարցերի պատասխանը պատրաստի չպետք է լինի տեքստում

դ /հարցերը չպետք է վերաբերվեն փաստերի ,աննշան դեպքերի:

3.Գործողությունների զարգացման վերլուծություն

Պետք է կարևորել ստեղծագործության սկիզբն ու ավարտը, տեղի ունեցող դեպքերը, որոնց հիմքում ընկած է ստեղծագործության բովանդակությունը:

4.Գեղարվեստական կերպարների վերլուծություն

Քանի որ մանկական գրականության մեջ գեղարվեստական կերպարն առաջին հերթին ստեղծագործության հերոսն է,ապա՝

ա/ աշխատանք պետք է տարվի հերոսի բնավորության վերլուծության շուրջ

բ/ անհրաժեշտ է, որ սովորողները հասկանան հերոսների գործողությունների դրդապատճառները ,որոնք կարող են կապված լինել նրանց անձնային հատկանիշների, բնավորության հետ կամ պայմանավորված սոցիալական իրականության հանգամանքներով

գ/ կերպարների հարաբերությունների վերլուծության հիման վրա բացահայտվում է ստեղծագործության հիմնական գաղափարը:

Գեղարվեստական տեքստի ընկալման գործընթացում կարելի է զարգացնել քննադատական, ստեղծագործական և գործնական մտածողությունները:

1.Առաջադրանքների մի խումբ նպատակաուղղված են զարգացնելու ստեղծագործական կարողությունները : Ընթերցանության դասաժամերին կարևորություն են ստանում խնդրահարույց իրավիճակների ստեղծումը ,որի ժամանակ սովորողները կզարմանան, կերևակայեն: Խթանելով երևակայությունը զգացմունքային դրսևորումները կարելի է զարգացնել **ստեղծագործական մտածողությունը**: Ընթերցած ստեղծագործության շարունակությունը հորինել կամ թեստ կազմել ընթերցած ստեղծագործության վերաբերյալ, որտեղ պետք է երեք պատասխաններից ընտրել ճիշտը: Արդյունավետ է նաև ընթերցվող տեքստի շուրջ սովորական նկարային պլանի կառուցումը: Չէ՞ որ պլան կազմելիս աշակերտը կատարում է ընթերցած նյութի իմաստային խմբավորում և այն կիրառում որպես մտապահման հնար: Ստեղծագործական շարադրությունները գրելիս սովորողները մեկ անգամ ևս խորամուխ են լինում ընթերցանության մեջ, նրանք պետք է փորձեն լուծել խնդիրը ,որն իր բնույթով մոտ է այն խնդրին , որը լուծել է հեղինակը ստեղծագործության միջոցով: <<Գրական ֆուտբոլ>>-ը , <<Բարձունքի նվաճումը>>-ը , <<Իմաստնության ծառ>> -ը ստեղծագործական բնույթի խաղեր են:

2.Դասի ընթացքում պետք է այնպիսի իրավիճակներ ստեղծել , որ աշակերտը ցանկանա ընթերցածի բովանդակությունը քննարկել դասընկերների հետ հարցերի կազմումով: Տեքստի բովանդակության շուրջ հարցերի կազմումը նպաստում է ոչ միայն տեքստի ընկալմանը, այնպես էլ մտածողության ակտիվացմանը: Կարծում եմ, որ աշակերտի տեքստի շուրջ հարցեր տալու կարողությունն ու ցանկությունը վկայում են այն մասին, որ

ա/ ինքը կարողացել է երկխոսության մեջ մտնել տեքստի հեղինակի հետ

բ/ աշակերտը ընդունել է տեքստը հետազոտողի դիրքորոշումը

գ/ աշակերտների մեջ զարգացել են **քննադատական միտքը** և դատողունակությունը

դ/ աշակերտների մեջ ձևավորվել են կանխագուշակման կարողությունները

ե/ աշակերտների մեջ զարգացել են տրամաբանական մտածողությունը և տեքստը խորությամբ ընկալելու կարողությունը: Հարցերի առաջադրման կարողությունների զարգացմանը նպաստում է այնպիսի ռազմավարության կիրառումը, ինչպիսինէ <<կանգառներով ընթերցանությունը>>: Արդյունավետ է նաև հետևյալ առաջադրանքները.

—Գրատախտակին գրված հարցերը վերադասավորելը ըստ տեքստի բովանդակության,

—ապացուցել, որ վերնագիրը ճիշտ է ընտրված,

—ըստ վերնագրի ընտրել տեքստի համապատասխան հատվածը,

—վերնագրել տեքստի տվյալ հատվածը:

Կարծիքի-տեսակետի հայտնումը, ստեղծագործության շուրջ նկարաշարի կազմումը, ստեղծագործության հերոսի անունից նամակ գրելը ևս նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը:

<<Ստեղծագործության փոխակերպումներ>>, << Լրագրողներ >> խաղը կրկին միտված են զարգացնել ու սովորողի քննադատական միտքը:

Առաջադրանքների և խաղերի երրորդ խումբն էլ **գործնական հմտություններ** են զարգացնում. դրանք են՝

խաչբառների, վիկտորինաների ինքնաշեն գրքերի կազմումը, ապլիկացիաները : Ստեղծագործության շուրջ նկարաշարի կազմումը գործնական-ստեղծագործական—քննադատական աշխատանք է: Ընթերցած ստեղծագործության շուրջ կարելի է կազմել նկարաշար հետևյալ կերպ.

—որոշել նկարաշարի նկարների քանակը,

—որոշում են,թե տեքստի որ բառերը կարող են համապատասխանեցնել տվյալ դրվագի հետ

—ընթերցած ստեղծագործության նյութի վերաբերյալ ինքնուրույն, ստեղծել բովանդակությամբ իրար հետ կապված նկարների շարք:

Թուղթը նախապես են պատրաստում: Պատրաստի նկարաշարը փակցնում են պաստառին: Մտածելու և ուսուցման հմտությունների զարգացմանը նպաստում է փոխադարձ ուսուցումը:

Տեքստի բովանդակությունն ընկալելու կարողությունների ձևավորման և զարգացման շուրջ աշխատանքը կազմակերպվում է հետևյալ հաջորդականությամբ՝ հենվելով սովորողների ընթերցողական գործունեության ,տեքստի ընդհանուր բովանդակությանը, դրա զգայական կողմին:

1. Սկզբում՝ խթանման փուլում պետք է ստեղծել իրավիճակներ ,որտեղ կարող են զարգանալ դեպքեր, որոնք ընթերցողի կյանքին նման են և առկա է պատմվածքում և տալ անհրաժեշտ տեղեկություններ հեղինակի կյանքի մասին, որոնք սովորաբար բարձրացնում են հետաքրքրությունը:
2. Իմաստավորման փուլում լուռ և բարձրաձայն ընթերցանությամբ ընթացքում ծանոթանում են տեքստի ընդհանուր բովանդակությանը , դրա զգայական կողմին: Ընթերցողն իր համար որոշում է, թե հարազատ է արդյո՞ք իրեն ստեղծագործության թեման, հերոսները, նոր տեղեկություն ձեռք բերեց ստեղծագործությունից, դուր եկավ իրեն, հեշտ է հասկանալ:

Ուսուցչի կողմից ստեղծագործության նախնական ընկալման ստացման նպատակով տրված հարցերն ու առաջադրանքներն պետք է համապատասխանեն ընկալման այս աստիճանին: Կրկնակի ընթերցման ժամանակ սկսում ընկալման 2-րդ աստիճանը՝ծանոթություն հերոսների նրանց արարքների պատճառներին, ստեղծագործության կառուցվածքին: Ընկալման 3-րդ աստիճանը տեքստի իմաստավորման կարողությունների ձևավորումն է, այսինքն կարողություններ, որոնց օգնությամբ իրականացվում է ստեղծագործության լիարժեք ընկալումը:

2.2 Ուսումնական ռազմավարությունները առցանց գործիքների օգտագործմամբ

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ, այնուհանդերձ, գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձևերը

նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Storyjumper ծրագրով ստեղծված խոսող գիրքը շրջված դասարան մեթոդի կիրառումով հրաշալի տարբերակ է ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն ներարկելու գործում: Շրջված դասարան մեթոդի կիրառման համար ստեղծել եմ նաև Կապանի N13 հիմնական դպրոց դասվար Լ.Սարգսյան :

Ուսուցման արդյունավետության համար ընտրել եմ նաև առցանց ուսումնական հարթակները ,առցանց խաղային կամ գնահատման գործիքները /Classroom ,LearningApp

https://docs.google.com/document/d/1iDpsIFeDjRIMOIC1_-1zSD5WYzg-P7JO/edit?usp=sharing&ouid=108721923285884419238&rtpof=true&sd=true

https://padlet.com/lusinesargsyan1983/fovlr4oou2mymv7f

Ուշադրությունը զարգացնող խաղեր / էջ 80-87/

Օրինակ `157. Վառի՞ր լապտերը

Մեծահասակներից մեկը ընտրվում է խաղավար : Խաղավարը ձեռքում պահելով կարմիր , կապույտ, դեղին շրջանները , ասելու է՝ վառի՞ր ....լապտերը՝ նշելով որևէ գույն , օրինակ ՝ կապույտ , բայց ձեզ շփոթեցնելու համար բարձրացնելու է ուրիշ գույնի շրջան : Դուք պետք է մոտենաք ոչ թե բարձրացված, այլ արտասանված գույնի լապտերին:

Ուշադրությունը զարգացնող խաղեր կան նաև այս գրքի ձևաբանության, բառագիտության , բառակազմության և կարդալու կարողությունների զարգացում բաժիններում /էջ 15,17,18,19,23 ,24, 26,30,34,35,36,45 , 63, 65և այլն /:

Շարժուն խաղերով ևս կարելի զարգացնել սովորողների ուշադրությունը Նշված խաղերը միաժամանակ լուծում են մի շարք ուսումնական խնդիրներ :

Քննադատական մտածողություն զարգացնող խաղեր / էջ 49, 50, 57,84, 99 և այլն:

Կան խաղեր , որոնց ընթացքում հնարավոր է զարգացնել միաժամանակ ուշադրությունը կենտրոնացնելու, արագ կողմնորոշվելու , հաղորդակցական , համագործակցային , գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողություններ և հմտություններ:Եթե ստեղծում ենք իրավիճակներ և աշակերտին մղում ենք լուծումներ գտնելու, ապա ուղղորդում ենք հարցեր ձևակերպելու , ստեղծագործական աշխատանքներ կատարելու գործում , ուրեմն մենք խթանում ենք վերլուծական , քննադատական մտածողության զարգացմանը :

Վերջերս հետազոտական աշխատանք եմ իրականացրել երկրորդ դասարանում Հովհաննես Թումանյանի ծննդյան նվիրված ցերեկույթին նախապատրատվելով : Մեկ ամսվա ընթացում հետաքննության մոդելով խմբերի բաժանված աշակերտները, ստանալով ուսուցչուհու կողմից ցուցումները, ընտրելով առաջադրված հեքիաթներից իրենց համար հարազատը , անցան գործի : Յուրաքանչյուր խումբ պետք է տրված հեքիաթը ներկայացներ թատրոնի առաջադրված տարբերակով :

Հետաքննության վրա հիմնված ուսումնական ծրագիր կամ հետաքնության մոդելով հետազոտական աշխատանքը նախագծային ուսումնառություն է :Այն շատ հետաքրքիր է սովորողների համար ,քանի որ թեման ընտրում են իրենք , որը սերտորեն կապվում է իրական կյանքի հետ : Երբ աշակերտները աշխատում են թիմերով ավելի ոգևորված են լինում : Այս տեսակ գործունեության ժամանակ շատ ու շատ կարևորագույն հմտություններ են /ինքնուրույնություն, համագործակցություն,պատասխանատվություն, ստեղծարարություն , նպատակասլացություն , որոշում կայացնելու հմտություն և այլն / ձեռք բերում աշակերտները, որոնք շատ անհրաժեշտ են 21-րդ դարի ինքնակառավարվող սովորող ձևավորելու գործում : Հետաքննության մոդելով հետազոտական աշխատանքի փուլերն են.

ա/ պլանավորման փուլ

բ/տեղեկատվության որոնման փուլ

գ/տեղեկատվության մշակման փուլ

գ/պրոդուկտի ստեղծման փուլ

դ/ պրոդուկտի ներկայացման փուլ

ե/ պրոդուկտի գնահատման փուլ

Հետաքննության վրա հիմնված ուսումնական ծրագիրը իրականացվում է Բլումի տաքսոնոմիայով : Այն պլանավորվում և նախագծվում է այնպես, որ սովորողներին ցածր մակարդակից հասցնեն ավելի բարձր մակարդակի (Բլումի բնօրինակ տաքսոնոմիայի) տվյալ առարկայի մեջ: Ամենացածր երեք մակարդակներն են ՝ գիտելիք, հասկացողություն և կիրառում: Ամենաբարձր երեք մակարդակներն են ՝ վերլուծություն, սինթեզ և գնահատում: Ծրագիրը կազմելիս հաշվի եմ առել նախագծային աշխատանքի տեսակը , ձևը, բնույթը ,աշակերտների կարիքները, նրանց բնավորությունը և խառնվածքը , նախագծի նպատակը և խնդիրները և այս ամենով պայմանավորված ընտրելեմ մեթոդներ : Օգտագործեցի մի շարք մեթոդներ : Մեծ հաջողություններ ունեցա, երբ կիրառեցի Շրջայց պատկերասրահով մեթոդ-հնարը: Աշակերտները խմբերի բաժանվեցին և յուրաքանչյուր խումբ ստացավ իր դերը:

I խումբ՝ երաժշտական թատրոն

I I խումբ՝ սովորական թատրոն

I I I խումբ ՝ տիկնիկային թատրոն

I V խումբ՝ մնջախաղային թատրոն

V խումբ ՝

Կատարեցի այսպիսի բաժանում , քանի որ տարամակարդակ դասարան էր : Այս եղանակով յուրաքանչյուրը աշխատեց իր կարողությունների սահմանում: Խմբերը աշխատում էին բեմադրությունների շուրջ : Իհարկե հարկ է նշել ,որ տարրական դասարաններում ծնողների աջակցությունը շատ կարևորվում է :

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքիս շրջանակներում ներկայացված տեսակետները ,ինչպես նաև ներկայացված վերլուծության արդյունքները առանձնացնում եմ հետևյալ եզրահանգումները :

1.Տեքստի դժվար ընկալումը հաճախ բացատրվում է մի պարզ պատճառով՝ երեխան պարզապես ուշադիր չի կարդում: Նրանք չգիտեն, թե ինչպես կարդան,կենտրոնանան կարդացած մտքերի վրա: Բավական չէ ընթերցող երեխային միայն զգուշացնել <<կենտրոնացիր կարդացածիդ վրա>>, կամ <<ուշադիր կարդա՛>>, <<մտածի՛ր ինչ ես կարդում>>: Հետևաբար ճիշտ ուսումնական ռազմավարությունների դեպքում կզարգանա նաև սովորողների **կամածին ուշադրությունը** :

2.Այսպիսով աշակերտը կսիրի ընթերցել, եթե հասկանա ընթերցած նյութի բովանդակությունը: Ինքն էլ կսկսի տեքստում որոնել և գտնել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը: Հետևաբար անհրաժեշտ է սովորողների մեջ **հետաքրքրասիրություն մտցնել** , նրանց ընկերացնել գրքի հետ:

3. Ուստի մայրենիի ժամերին շատ կարևոր է տեքստի շուրջ աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիան: Իսկ դրա համար անհրաժեշտ է կատարել մայրենիի ժամերի կատարելագործման ժամանակակից պահանջները և ունենալ այն հարցի պատասխանը , թե ինչ որակի ընթերցանություն ենք ակնկալում:

4. Իմ պլանավորած աշխատանքով ձևավորվեց նաև սովորողի ինքնուրույնությունը, ուսման նկատմամբ հետաքրքրասիրությունը , պատասխանատվությունը , հաղորդակցական հմտությունները :Սրանք մեկը մյուսի հետ փոխկապակցված են և եթե հետաքրքրություն առաջացնենք ուսման նկատամամբ . սովորողի մոտ մոտիվացիա կլինի, կունենա ինքնուրույնություն, ձգտում և հեշտությամբ կզարգացնենք մտածողության բոլոր տեսակները : Իսկ այս ամենի հիմքում են ընկած է ինքնակառավարվող սովորողի առաջանային հմտությունը՝ **լեզվական գրագիտություն և կարողունակությունը,** ձևավորելու ուղիները:

5. Մենք եկանք այն համոզման ,որ երբ աշակերտներին ներգրավում ենք ուսումնական /Classroom ,LearningApp/ հարթակներում նավարկելու , նրանց մոտ կրկնապատկում է ավելին իմանալու , նոր փորձությունների ճանապարհին հաղթանակելու ձգտումը :

6.Մայրենիի, մաթեմատիկայի , ես և շրջակա աշխարհի , կերպարվեստի , տեխնոլոգիայի դասավանդման ժամանակ նպատակ ենք դարձնում ընթերցածի և լսածի ճիշտ ընկալման կարողությունների զարգացումը : Բոլոր թեմաների ուսումնասիրման ժամանակ ապահովվելով **միջառարկայական կապ** , փոփոխելով գործունեության տեսակները՝ աշակերտներին ակտիվ և ուշադիր կպահենք ,նրանք չեն ձանձրանա և մշտապես մոտիվացիա կլինի ավելին իմանալու համար: Խմբային աշխատանքների ընթացքում նպատակահարմար է փոխադարձ ուսուցման և փոխադարձ գնահատման տարրերի կիրառումը , որը կխթանի համագործակցային և հաղորդակցական հմտությունների ձևավորմանը :

7.Անհրաժեշտ է, որ դասընթացի ավարտին սովորողի վարքում և իմացական դաշտում փոփոխություն տեղի ունենա , որ նրա մտածողությունը, վարքագծի մեջ դրական դինամիկա նկատվի: Եվ որ ամենակարևորն է պետք է զարգանա «սովորել սովորելու» հմտությունը: Մանկավարժն օգնում է սովորողներին զարգացնել խորը ընկալման և քննադատական մտածողության հմտություններ նաև դառնալ ավելի ռազմավարական, ինքնամոտիվացված սովորողներ: Հետևաբար,մենք պետք է դադարենք սովորողներին այնպիսի հարցեր տալ, որոնք նրան արդեն ծանոթ են կամ կարող են արագ գտնել ինտերնետում: Որոնիչների ակտիվացման հետ անհետանում է շատ փաստեր հիշելու անհրաժեշտությունը: Փոխարենը, սովորողներին պետք է խրախուսել օգտագործել տեղեկատվությունը՝ սեփական գաղափարները ձևավորելու և նպատակային իմաստ ստեղծելու համար: Խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու ունակությունը քննադատական մտածողության դրսևորում է,ինչը հասանելի է դառնում մետաիմացական գործընթացների ակտիվացման պարագայում: Նման աստիճանում գտնվող սովորողը համագործակցող է, կազմակերպված, ունի պատասխանատու և նախաձեռնող վարքի դրսևորում: Այսպիսի սովորողը հաջողակ կլինի ողջ կյանքում :

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

1. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա /Ձ. Գյուլամիրյան 2006թ./

2. Մայրենիի ուսուցման մեթոդիկա /Ձ. Գյուլամիրյան 2018թ.

3. 200 խաղ / Աստղիկ Բալայան 2017թ. /

4.Ինչպես պլանավորել մայրենիի դասը 2 / Կ. Չիբուխչյան ,Կ.Թորոսյան /

5.Վարդումյան Ս., Ձաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005,

6. *https://escs.am/am/category/standard?s=edu*

7. Bloom's taxonomy is a learning taxonomy հոդված

8. www.ou.edu/idp/dfink.html:References

9. Դասընթացների նախագծման ինտեգրված մոտեցում (2003, մատչելի է Jossey-Bass- ից, www.wiley.com

10. Դասերի պլանավորման հետ կապված տեսանյութեր

http://www.edutopia.org/blog/new-teacher-lesson-planning-lisa-dabbsԴասի և միավորի պլանավորման ռազմավարությունները | Ինչպես պլանավորել և մատուցել արդյունավետ դասներ

http://www.youtube.com/watch?v=tLV8RibZK4s

Դասի պլանավորման հոդվածներ

http://www.scholastic.com/teachers/collection/lesson-planning

ESL դասի պլաններ

http://esl.about.com/od/englishlessonplans/English_Lesson_Plans_for_ESL_EFL_Classes.htm

11.https://www.ucdenver.edu/faculty_staff/faculty/center-for-faculty-development/Documents/tutorials/Assessment/module3/good_objectives.htm?fbclid=IwAR1ZXuqNPD1yjmLh0EipZZDz3Cu1bGViDqEle46e8xQKadzYn4dXNXF4VD8